ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 246

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՆՈՐԻԿ ՄՈՒՇԵՂԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ, ՎԱՆՈՒՀԻ ԺՈՐԺԻԿԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ, ԱՐՏԱԿ ՆՈՐԻԿԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ, ԱԼԻՍԱ ՆՈՐԻԿԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԵՎ ՄԻՔԱՅԵԼ ՆՈՐԻԿԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0.225 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը և քաղաքացի Նորիկ Մուշեղի Հայրապետյանի դիմումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացիներ Նորիկ Մուշեղի Հայրապետյանին, Վանուհի Ժորժիկի Բաղդասարյանին, Արտակ Նորիկի Հայրապետյանին, Ալիսա Նորիկի Հայրապետյանին և Միքայել Նորիկի Հայրապետյանին 0.225 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0106-0003, գործառնական նշանակությունը՝ ջրովի վարելահող) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ խաղողի այգի գործառնական նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 247

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵԼՓԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՐԱՅԻԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արենի համայնքի ղեկավարի որոշման համաձայն 2020 թվականի օգոստոսի 20-ին Արենիի համայնքապետարանում Ելփին բնակավայրի բնակիչ Արայիկ Միքայելյանի նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ Ելփին բնակավայրի 13-րդ փողոցում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը զավթելու համար:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածով սահմանված կարգով վարչական վարույթը կասեցնելու հիմքերը, որի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն վարչական վարույթը կարող է կասեցվել նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում: Նույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված է, որ վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը և վարչական մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքերում իրավական այլ ակտերով: Վերը նշված օրենքի 38-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարչական վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարվող փաստական հանգամանքների վերաբերյալ: Այդ լսումները որպես կանոն իրականացվում են գործի քննության ընթացքում հրավիրվող նիստի ժամանակ՝ բանավոր կարգով:

Վերը նշված վարչական վարույթը գտնվում է լսումների փուլում և նման հարցի քննությունը սեղմ ժամկետներում իրականացնել հնարավոր չէ, քանի որ Հայաստանի Հանրապետության կառավարության 27.09.2020 թվականի թիվ 1586-ն որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում հայտարարվել է ռազմական դրություն:

Հաշվի առնելով հիշատակված իրավակարգավորումները և հիմք ընդունելով «Արենի համայնքի տարածքում վարչական իրավախախտումներ հայտնաբերելու և պատասխանատու անձանց (սուբյեկտներին) վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով

մշտական հանձնաժողովի» թիվ 8 նիստի թիվ 1 արձանագրությունը Արենիի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթը հետաձգվում է:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը ելնելով դրանում պարունակվող բառերի ու արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Այս կանոններին համապատասխան և համադրված կերպով մեկնաբանելով վերը հիշատակված իրավանորմերը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Արենի համայնքի ղեկավարը **որոշում է՝**

1. Քաղաքացի Արայիկ Միքայելյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կասեցնել մինչև Հայաստանի Հանրապետությունում հայտարարված ռազմական դրության ավարտը:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 248

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ, ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԶՈՀՎԱԾ ԵՎ ՎԻՐԱՎՈՐՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 2020 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 117 որոշումը Արենի համայնքի ղեկավարը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականի սեպտեմբերի 27-ին հայտարարված ռազմական դրության ժամանակ, մարտական գործողությունների հետեվանքով զոհված եվ վիրավորված զինծառայողների ընտանիքներին հատկացնել միանվագ դրամական աջակցություն՝ համաձայն սույն որոշման հավելված 1-ի:
2. Գումարը հատկացնել վարչական ղեկավարներին զոհված կամ վիրավոր անձանց ընտանիքներին փոխանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

Հավելված Արենի համայնքի

ղեկավարի 12.10.2020 թվականի

թիվ 248 որոշման

Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականի սեպտեմբերի 27-ին հայտարարված ռազմական դրության ժամանակ, մարտական գործողությունների հետևանքով զոհված և վիրավորված զինծառայողների ցուցակ

1. Զոհված զինծառայողների ցուցակ

h/h	*Անուն/ազգանուն/հայրանուն*	*Ծննդյան օր/ամիս/տարի*	*Բնակավայր*	*Գումարի չափ*
1	Ֆարմանյան Ալեքսանդր Նաիրիի	18/11/1996թ.	Ագարակաձոր	300.000 ՀՀ դրամ
2	Խաչատրյան Սուրիկ Հրայրի	30/08/1980թ.	Աղավնաձոր	300.000 ՀՀ դրամ
3	Կարապետյան Կարեն Մովսեսի	07/01/2001թ.	Աղավնաձոր	300.000 ՀՀ դրամ
Ընդամենը՝				900.000 ՀՀ դրամ

2. Վիրավորված զինծառայողների ցուցակ

h/h	*Անուն/ազգանուն/հայրանուն*	*Ծննդյան օր/ամիս/տարի*	*Բնակավայր*	*Գումարի չափ*
1	Հարությունյան Հայկ Կամոյի	12/07/2001թ.	Աղավնաձոր	100.000 ՀՀ դրամ
2	Գրիգորյան Արման Վարդանի	02/01/1985թ.	Աղավնաձոր	100.000 ՀՀ դրամ
3	Բաղալյան Մանուկ Աշոտի	23/09/1982թ.	Աղավնաձոր	100.000 ՀՀ դրամ

4	Գրիգորյան Վարդան Վարդգեսի	08/08/1995թ.	Աղավնաձոր	100.000 ՀՀ դրամ
5	Հակոբյան Արամ Արտավազդի	08/05/1996թ.	Աղավնաձոր	100.000 ՀՀ դրամ
6	Նիկոլյան Գրիգոր Տիգրանի	13/08/1997թ.	Աղավնաձոր	100.000 ՀՀ դրամ
7	Ծատուրյան Արտյոմ Աշոտի	20/07/1980թ.	Արենի	100.000 ՀՀ դրամ
8	Դավթյան Արթուր Կարենի	11/01/1997թ.	Արենի	100.000 ՀՀ դրամ
9	Ալավերդյան Արտակ Մամրեի	28/04/1995թ	Ելփին	100.000 ՀՀ դրամ
10	Բաղդասարյան Գեղամ Նորիկի	22/06/1984թ.	Ելփին	100.000 ՀՀ դրամ
11	Խաչատրյան Հայկ Գագիկի	16/12/2001թ.	Ռինդ	100.000 ՀՀ դրամ
12	Ավետիսյան Արման Շանթի	21/08/2000թ.	Ռինդ	100.000 ՀՀ դրամ
Ընդամենը՝				1.200.000 ՀՀ դրամ

Աշխատակազմի քարտուղար Գևորգ Սիմոնյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 249

ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ 28.10.2020 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀՈՂԵՐԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՕՐԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 27.09.2020 թվականի 1586-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով որոշմամբ պայմանավորված մինչև 50 տարեկան արակա սեռի ներկայացուցիչների ընդհանուր զորահավաքը, Հրապարակային սակարկությունների մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ և 22-րդ հոդվածի 1-ին կետը Արենի համայնքի ղեկավարը **որոշում է.**

1. Արենիի համայնքապետարանի կողմից 2020 թվականի հեկտեմբերի 28-ին ժամը 11:00-ին կայանալիք հողերի աճուրդ-վաճառքը հետաձգել 15 օրով՝ մինչև սույն թվականի նոյեմբերի 12-ը ժամը 11:00,
2. Հայտերի ընդունման վերջնաժամկետը սահմանել 2020 թվականի նոյեմբերի 9-ը, ժամը 11:00.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 250

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ, ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԶՈՀՎԱԾ ԵՎ ՎԻՐԱՎՈՐՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 2020 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 117 որոշումը Արենի համայնքի ղեկավարը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականի սեպտեմբերի 27-ին հայտարարված ռազմական դրության ժամանակ, մարտական գործողությունների հետեվանքով զոհված եվ վիրավորված զինծառայողների ընտանիքներին հատկացնել միանվագ դրամական աջակցություն՝ համաձայն սույն որոշման հավելված 1-ի:
2. Գումարը հատկացնել վարչական ղեկավարներին զոհված կամ վիրավոր անձանց ընտանիքներին փոխանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

Հավելված Արենի համայնքի

ղեկավարի 14.10.2020 թվականի

թիվ 250 որոշման

Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականի սեպտեմբերի 27-ին հայտարարված ռազմական դրության ժամանակ, մարտական գործողությունների հետևանքով զոհված և վիրավորված զինծառայողների ցուցակ

1. Զոհված զինծառայողների ցուցակ

հ/հ	*Անուն/ազգանուն/հայրանուն*	*Ծննդյան օր/ամիս/տարի*	*Բնակավայր*	*Գումարի չափ*
1	Կարապետյան Սիսակ Երվանդի	27/01/1984թ.	Ռինդ	300.000 ՀՀ դրամ
Ընդամենը՝				300.000 ՀՀ դրամ

2. Վիրավորված զինծառայողների ցուցակ

հ/հ	*Անուն/ազգանուն/հայրանուն*	*Ծննդյան օր/ամիս/տարի*	*Բնակավայր*	*Գումարի չափ*
1	Մկրտչյան Գագիկ Բաբկենի	03/07/1982թ.	Ազարակաձոր	100.000 ՀՀ դրամ
2	Սարգսյան Ռաֆայել Շահենի	16/06/1997թ.	Գնիշիկ	100.000 ՀՀ դրամ
3	Բաղալյան Տիգրան Արթուրի	28/01/2001թ.	Խաչիկ	100.000 ՀՀ դրամ
4	Հակոբյան Վահե Արամայիսի	26/07/1997թ.	Չիվա	100.000 ՀՀ դրամ
Ընդամենը՝				400.000 ՀՀ դրամ

Աշխատակազմի քարտուղար Գևորգ Սիմոնյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 251

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ, ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԶՈՀՎԱԾ ԵՎ ՎԻՐԱՎՈՐՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 2020 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 117 որոշումը Արենի համայնքի ղեկավարը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականի սեպտեմբերի 27-ին հայտարարված ռազմական դրության ժամանակ, մարտական գործողությունների հետեվանքով զոհված եվ վիրավորված զինծառայողների ընտանիքներին հատկացնել միանվագ դրամական աջակցություն՝ համաձայն սույն որոշման հավելված 1-ի:
2. Գումարը հատկացնել վարչական ղեկավարներին զոհված կամ վիրավոր անձանց ընտանիքներին փոխանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

Հավելված Արենի համայնքի

ղեկավարի 15.10.2020 թվականի

թիվ 251 որոշման

Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականի սեպտեմբերի 27-ին հայտարարված ռազմական դրության ժամանակ, մարտական գործողությունների հետևանքով զոհված և վիրավորված զինծառայողների ցուցակ

1. Զոհված զինծառայողների ցուցակ

h/h	*Անուն/ազգանուն/հայրանուն*	*Ծննդյան օր/ամիս/տարի*	*Բնակավայր*	*Գումարի չափ*
1	Մարտիրոսյան Կարեն Զոնիկի	03/01/1997թ.	Ազարակաձոր	300.000 ՀՀ դրամ
2	Մարտիրոսյան Զոնիկ Վաղինակի	01/01/1974թ.	Ազարակաձոր	300.000 ՀՀ դրամ
Ընդամենը՝				600.000 ՀՀ դրամ

2. Վիրավորված զինծառայողների ցուցակ

h/h	*Անուն/ազգանուն/հայրանուն*	*Ծննդյան օր/ամիս/տարի*	*Բնակավայր*	*Գումարի չափ*
1	Կարապետյան Ժուլվեր Մանվելի	04/12/1979թ.	Ազարակաձոր	100.000 ՀՀ դրամ
2	Ենոքյան Արման Միհերի	10/12/1993թ.	Արենի	100.000 ՀՀ դրամ
3	Ավետիսյան Կարեն Համազասպի	21/01/2001թ.	Արփի	100.000 ՀՀ դրամ
Ընդամենը՝				300.000 ՀՀ դրամ

Աշխատակազմի քարտուղար Գևորգ Սիմոնյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 252

14.09.2004 ԹՎԱԿԱՆԻՆ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ /2010ԹՎԱԿԱՆԻՆ ՓՈԽԱՆՑՎԵԼ Է ՆԱԽԿԻՆ ԱՐՓԻԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻՆ / ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՐԴԱՆ ԱՇՈՏԻ ԽԱԼԱԹՅԱՆԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԱՐՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ << ՀՈՓԻԿՆԵՐ>> ՀԱՆԴԱՄԱՍՈՒՄ 3.3 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 101-րդ հոդվածի 4-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Վարդան Աշոտի Խալաթյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

Լուծել 14 սեպտեմբերի 2004 թվականին Եղեգնաձորի քաղաքապետարանի / 2010թվականին ՀՀ կառավարության որոշմամբ փոխանցվել է նախկին Արփիի գյուղապետարանին / և քաղաքացի Վարդան Աշոտի Խալաթյանի միջև կնքված Արենի համայնքի Արփի բնակավայրի <<Հոփիկներ>> հանդամասում 3.3 հա մակերեսով հողամասի (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող) վարձակալության թիվ 1034 պայմանագիրը /վկայական 0055341/:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**